# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 12.03.2018թ.

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի**

**թիվ ԳԲԽ-ԱՄ-2018/31**

Հայաստանի Հանրապետության գնումների բողոքարկման խորհուրդը (այսուհետ նաև՝ Խորհուրդ)՝ քննելով «Խաչպար» ՍՊԸ-ի 23.02.2018թ. ներկայացրած բողոքը (այսուհետ նաև՝ ԳԲԽ-ԱՄ-2018/31 բողոք) և կից փաստաթղթերը, պարզեց հետևյալը.

**1. «Խաչպար» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը**

«Խաչպար» ՍՊԸ-ն 23.02.2018թ. Խորհրդին ներկայացված բողոքով հայտնել է հատեկյալը.

«ՀՀ պաշտպանության նախարարության կողմից 2018թ. փետրվարի 19-ի թիվ 1 որոշմամբ՝ «Ախտահանիչ նյութերի» ձեռքբերման նպատակով հայտարարել է «ՀՀՊՆՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-9/11» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որի հրավերի միակ՝ թիվ 1 չափաբաժնի «ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ» Հավելված թիվ 1-ի գնման ենթակա ապրանքի «Ապրանքի անվանում» սյունակում Պատվիրատուն գրել է «Ախտահանիչ նյութեր» բառերը, իսկ «տեխնիկական բնութագիր» սյունակում գրված են ինչպես բառային, այնպես էլ թվային ու տոկոսային պահանջներ:

Հրավերի «Տեխնիկական բնութագիր» սյունակում առկա՝ թվով 2, այդ կոնկրետ պահանջները՝ որ դիքլորիզոցիանուրաթթվի նատրիումական աղը՝ որպես ազդող նյութ, կազմում է հաբի ընդհանուր զանգվածի ոչ ավել քան 50 %-ը, և որ 1 հաբի լուծման ժամանակ անջատվող ակտիվ քլորի քանակը 1,75 գրամից ոչ պակաս լինելը, համապատասխանում են կոնկրետ «Պրեսեպտ» բրենդային անվանումով ախտահանիչ միջոցին, ինչը ապացուցելու համար Ընկերության կողմից Խորհրդին է ներկայացվում ՀՀ ԱՆ կողմից հաստատված՝ «Պրեսեպտ» անվանումով ախտահանիչ միջոցի կիրառման մեթոդական հրահանգը, ինչպես նաև ՀՀ ՊՆ-ի կողմից «Ախտահանիչ նյութերի» ձեռքբերման նպատակով 2015թ. դեկտեմբերի 10-ին և 2017թ. մարտի 6-ին հայտարարված հրավերները, որտեղ թիվ 6-րդ չափաբաժիններում գրված են «Պրեսեպտ կամ համարժեք» բառերը, տեխնիկական բնութագրերում առկա են միևնույն՝ հաբի ընդհանուր զանգվածի ոչ ավել քան 50 %-ը, և որ 1 հաբի լուծման ժամանակ անջատվող ակտիվ քլորի քանակը 1,75 գրամից ոչ պակաս լինելը պահանջները:

«ՀՀՊՆՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-9/11» ծածկագրով գնանշման հարցման հրավերի միակ՝ թիվ 1 չափաբաժնի «Տտեխնիկական բնութագիր» սյունակում գրված՝ ազդող նյութը կազմում է հաբի ընդհանուր զանգվածի ոչ ավել քան 50 %-ը, և որ 1 հաբի լուծման ժամանակ անջատվող ակտիվ քլորի քանակը 1,75 գրամից ոչ պակաս լինելու պահանջները չեն նպաստում պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնմանը և չեն խրախուսում նրանց միջև մրցակցությունը:

Վերը նշվածը ապացուցելու համար Խորհրդին է ներկայացվում դիքլորիզոցիանուրաթթվի նատրիումական աղը՝ որպես ազդող նյութ պարունակող, ինքնալուծվող հաբերի տեսքով, սակայն այլ բրենդային անվանումներ ունեցող՝ թվով 4 հատ, ախտահանիչ նյութերի կիրառման մեթոդական հրահանգները՝ հաստատված ՀՀ ԱՆ կողմից, որտեղ արված նշումները փաստում են, որ բոլորի մոտ էլ այդ 2 թվային մեծությունները տարբեր են ինչպես «Պրեսեպտ»-ի, այնպես էլ միմյանց թվերից: Այդ հրահանգներում առկա թվային մեծություններով կազմված համեմատական աղյուսակից ակնհայտ է դառնում, որ ունենալով հաբերի զանգվածների, անջատվող ակտիվ քլորի տարբեր մեծություններ, բոլորն էլ ունեն մեկ ընդհանուր և իրար համապատասխանող մեծություն, որը վերաբերվում է 1 հաբը 10 լիտր ջրում լուծելիս ստացվող աշխատանքային լուծույթի կոնցենտրացիային՝ 0.014-0.015 տոկոս: Սակայն

այս միակ համարժեքության ցուցանիշը բացակայում է ՀՀ ՊՆ-ի այս 3 տարիների մրցույթների հրավերների պահանջներում:

Գնման առարկաների բնութագրերը նման ձևով կազմելով ՀՀ ՊՆ-ն չիմնավորված խոչընդոտներ է առաջացնում հնարավոր մասնակիցների, այդ թվում՝ նաև «Խաչպար» ՍՊԸ-ի համար, որոնք հավասար պայմաններ չեն ապահովում հնարավոր մասնակիցների, այդ թվում՝ նաև «Խաչպար» ՍՊԸ-ի համար:

Ներկայացված հրահանգների և համեմատական աղյուսակի թվերը ապացուցում են, որ ՀՀ ՊՆ-ի «ՀՀՊՆՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-9/11» ծածկագրով գնանշման հարցման հրավերի տեխնիկական բնութագիրը պարունակում է կոնկրետ արտադրողի կոնկրետ բրենդը՝ «Պրեսեպտ» հաբերը նույնականացնող թվեր: Սակայն «Պրեսեպտ» հաբերի հրահանգում առկա թվերն էլ անգամ ամբողջական չեն ներառվել ՀՀ ՊՆ-ի տեխնիկական բնութագրում:

Պրեսեպտ» հաբերի հրահանգի համաձայն՝ 5,0 գրամ կշռով 1 հաբը լուծելիս անջատվում է 1,44 – 1,76 գրամ ակտիվ քլոր, այն դեպքում, երբ Պատվիրատուն իր հրավերում նշել է միայն վերին սահմանը՝ 1,76 գրամ, չնշելով ստորին սահմանը՝ 1,44 գրամ, դրանով էլ թույլ տալով հերթական օրինախախտումը:

*Ընկերության կողմից բողոքի իրավական հիմքեր և ապացույցներ նշվեն են հայտնյալը.*

«Վերոգրյալ փաստերը, ներկայացված փաստաթղթերը, դրանցում առկա տվյալների համեմատություններն ու համադրումները ապացուցում են, որ «ՀՀՊՆՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-9/11» ծածկագրով գնանշման հարցման հրավերի տեխնիկական բնութագրում առկա գնման առարկայի բնութագրերը՝

ա) ամբողջությամբ և հստակ չեն նկարագրում ձեռք բերվող ապրանքի հատկանիշները, չեն ներառում գնման առարկայի ամբողջական նկարագրությունը՝ հակասելով «Գնումների մասին» ՀՀ Օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասի և 2-րդ մասի 4-րդ կետով սահմանված պահանջներին;

բ) չիմնավորված խոչընդոտներ են առաջացնում հնարավոր մասնակիցների, այդ թվում՝ նաև «Խաչպար» ՍՊԸ-ի համար, հավասար պայմաններ չեն ապահովում հնարավոր մասնակիցների, այդ թվում՝ նաև «Խաչպար» ՍՊԸ-ի համար՝ հակասելով Օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով սահմանված պահանջներին;

գ) չեն նպաստում պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնմանը և չեն խրախուսում նրանց միջև մրցակցությունը՝ հակասելով Օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով սահմանված պահանջներին:

Ամփոփելով վերոգրյալը, «Խաչպար» ՍՊԸ-ն ներկայացված բողոքով ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին խնդրել է՝ պարտավորեցնելու «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-9/11» ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովին՝ ընդունելու գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին որոշում:

«Խաչպար» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով Խորհրդի 28.02.2018թ. ժամը 11:00-ի նիստի վերաբերյալ, տնօրենը ապահովել է իր մասնակցությունը, ով պնդել է բողոքով Խորհրդին ներկայացված դիրքորոշումը:

## 2. <u>ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ներկայացված փաստերը, հիմնավորումները և պահանջը</u>

ՀՀ պաշտպանության նախարարությունը 06.03.2018թ. թիվ ԴՎԱ/793 գրությամբ ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին հայտնել է հետևյալը.

1. «ազդող նյութը՝ դիքլորիզոցիանաթթվի նատրումական աղը, կազմում է առաջարկվող հաբի ընդհանուր զանգվածի ոչ ավել քան 50 %» նշված պայմանը սահմանվել է տեխնիկական բնութագրով, քանի որ եթե ազդող նյութի քանակությունը ավելանում է դա կատարվում է ի հաշիվ հավելող նյութերի՝ նատրիումի հիդրոկարբոնատի և ադիպինաթթվի, որոնք ապահովում են հաբի ամբողջական տարրալուծումը, նստվածքի առաջացման կանխումը և աշխատանքային լուծույթի ակտիվության պահպանումը ոչ պակաս քան 5 օր տևողությամբ:

2. «1 հաբի լուծման ժամանակ անջատվող ակտիվ քլորի քանակը 1.75գ-ից ոչ պակաս» - աշխատանքային լուծույթում ակտիվ քլորի պարունակությամբ է պայմանավորված լուծույթի ազդեցությունը հարուցիչ շտամերի նկատմամբ: Քանի որ ՀՀ ԶՈՒ ենթակա զորամասերում արդեն երկար տարիներ կիրառվում է բարձր ակտիվությամբ քլոր պարունակող հաբեր՝ որն ապահովում է առավել հուսալի կանխարգելիչ միջոցառումների

կազմակերպում տարբեր վարակների դեմ, ակտիվ քլորի քանակության իջեցումը կարող է հանգեցնել այդ հարուցիչների կողմից ռեզիստենտականության առաջացման, այինքն միջոցը ոչ միայն չի պայքարում հարուցիչի դեմ, այլ հարուցիչը դառնում է կայուն նմանատիպ ախտահանիչ միջոցների հանդեպ և հետագայում անհրաժեշտություն կառաջանա ձեռք բերել էլ ավելի ակտիվ քլոր պարունակող հաբեր, որն իր հետ կբերի հավելյալ ծախսեր: Կարևոր է նաև այն հանգամանքը, որ նույն հարուցիչը ՀՀ ՋՈՒ ենթակա բժշկական հաստատություններում և զորամասերի գործողության առանձնահատկություններով:

Ամփոփելով վերը նշվածը, Պատվիրատուն հայտնել է, որ գնման առարկայի տեխնիկական բնութագիրը սահմանվել է հիմք ընդունելով առկա պահանջները և չկա որևէ միտում կոնկրետ արտադրողի մասնակցությունը ընթացակարգին սահմանափակելու համար:

ՀՀ պաշտպանության նախարարությունը, պատշաճ ծանուցված լինելով Խորհրդի 28.02.2018թ. ժամը 11:00-ի նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով պնդել է վերոհիշյալ գրությամբ ներկայացված դիրքորոշումը:

## 3. <u>ԳԲԽ-ԱՄ-2018/31 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը</u>

ԳԲԽ-ԱՄ-2018/31 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար ախտահանիչ միջոցների ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՀՀՊՆՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-9/11» ծածկագրով գնանաշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

2. Ընթացակարգի հրավերով նախատեսվել է գնման առարկա ախտահանիչ միջոցի հետևյալ տեխնիկական բնութագիր.

| Հ/հ | Ապրանքի CPV անվանում | Տեխնիկական բնութագիր | ԱՊՐԱՆՔԱ ՅԻՆ ՆՇԱՆԸ | ԱՐՏԱԴՐՈ ՂԻ ԱՆՎԱՆՈՒ | ԾԱԳՄԱՆ ԵՐԿԻՐԸ |
|---|---|---|---|---|---|

| | | | | ՄԸ | |
|---|---|---|---|---|---|
| 1 | **Ախտահանիչ նյութեր** | Ակտիվ քլոր պարունակող ախտահանիչ հաբեր Հաբի քաշը մինչև 6գ, որում ազդող նյութը՝ դիքլորիզոցիանաթթվի նատրումական աղը, կազմում է առաջարկվող հաբի ընդհանուր զանգվածի ոչ ավել քան 50%-ը: Որպես հավելող նյութեր պարունակում է նատրիումի հիդրոկարբոնատ և ադիպինաթթու, որոնք ապահովում են աշխատանքային լուծույթի ակտիվությունը առնվազն 5 օր: 1 հաբի լուծման ժամանակ անջատվող ակտիվ քլորի քանակը 1.75 գ-ից ոչ պակաս: Հաբերը ինքնալուծվող են: Միջոցը օժտված է հակամանրէային (ներառյալ տուբերկուլյոզ և հատուկ վտանգավոր վարակներ), հակավիրուսային, հակասնկային ակտիվությամբ: 1 հաբից ստացվող աշխատանքային լուծույթի մինիմալ ծավալը 2,5 լիտր է: Աշխատանքային լուծույթը միատարր է, չի պարունակում նստվածք, քլորին բնորոշ թույլ հոտով: | | | |

**Ծանոթություն.**

*1. Արտադրողի միջազգային հավաստագրի /ISO, GMP, EC կամ այլ/ և /կամ/ արտադրող պետության կողմից տրված արտադրության անվտանգության և որակի վերահսկման հավաստագրի պատճեն:*

*2. Արտադրող կազմակերպության (կամ արտադրողի պաշտոնական ներկայացուցչի)՝ կողմից տվյալ ապրանքի համար տրված համապատասխանության և (կամ) որակի հավաստագիրը:*

*3.Պիտանելիության ժամկետ ունեցող ապրանքների դեպքում՝ապրանքատեսակները հանձնման պահին պետք է ունենան առնվազն պիտանելիության ժամկետի 1/2-ը:*

*3. Մատակարարման ժամանակ ներկայացնել արտադրողին պետության կողմից տրված արտադրության անվտանգության և որակի վերահսկան հավաստագրի պատճեն և մատակարարված ապրանքատեսակների որակի սերտիֆիկատ:*

*5. Մատակարարման վայրը՝ ՀՀ ՊՆ 73014 գ/մ (ք. Աբովյան)*

*«Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 5-րդ կետի պահանջներով ցանկացած հղման դեպքում կիրառել «կամ համարժեք» բառերը*

**Վերջին երեք սյունակները լրացվում են մասնակցի ներկայացրած տվյալների հիման վրա:**

## 4. Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը

ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը, ուսումնասիրելով «Խաչպար» ՍՊԸ-ի 23.02.2018թ. բողոքը՝ կից նյութերով, ՀՀ պաշտպանության նախարարության 06.03.2018թ. թիվ ԴՎԱ/793 գրությունը, հայտնում է հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Օրենքի 13-րդ հոդվածի համաձայն՝

1. Գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը: Գնման առարկայի բնութագրերը, որոնք ներառում են նաև պայմանագրի գինը, ընդգրկվում են պայմանագրում:

2. Գնման առարկայի բնութագրերը՝

1) պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար.

2) չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը.

3) պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը.

4) ներառում են գնման առարկայի մասնագրի, տեխնիկական տվյալների, իսկ աշխատանքների դեպքում՝ նաև աշխատանքների ծավալաթերթի, ժամանակացույցի և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը:

3. Ելնելով գնման առարկայի առանձնահատկությունից՝ դրանց հատկանիշները հնարավորինս ներառում են ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության որակին, ստանդարտին, անվտանգությանը, պայմանական նշաններին, տերմինաբանությանը, փաթեթավորմանը, բեռնաթափմանը, չափին, նախագծերին, ինչպես նաև գնման առարկայի այլ հատկանիշներին վերաբերող պայմանների հստակ նկարագրությունը՝ հիմնված միջազգային ստանդարտների և Հայաստանի Հանրապետությունում գործող նորմատիվատեխնիկական փաստաթղթերի, ստանդարտների, իսկ դրանց բացակայության դեպքում՝ ժամանակավոր տեխնիկական պայմանների վրա:

4. Գնման առարկայի հատկանիշները կարող են սահմանվել նաև որպես կատարողականի կամ գործառութային (ֆունկցիոնալ) նկարագրեր, որոնք պետք է

ներկայացվեն բավարար ճշտությամբ՝ հնարավորություն տալով մասնակիցներին և պատվիրատուին ճշգրիտ ընկալել պայմանագրի առարկան:

5. Գնման առարկայի հատկանիշները չպետք է պահանջ կամ հղում պարունակեն որևէ առևտրային նշանի, ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին, բացառությամբ այն դեպքերի, երբ անհնար է գնման առարկայի բնութագրումն առանց դրանց: Հղումներ օգտագործելու դեպքում հատկանիշների բնութագիրը պետք է պարունակի «կամ համարժեք» բառերը:

ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար ախտահանիչ միջոցների ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՀՀՊՆՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-9/11» ծածկագրով գնանաշման հարցման ընթացակարգ:

Ընթացակարգի հրավերով նախատեսվել է գնման առարկա ախտահանիչ միջոցի հետևյալ տեխնիկական բնութագիրը.

| Հ/հ | Ապրանքի CPV անվանում | Տեխնիկական բնութագիր | ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ՆՇԱՆԸ | ԱՐՏԱԴՐՈՂԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ | ԾԱԳՄԱՆ ԵՐԿԻՐԸ |
|---|---|---|---|---|---|
| 1 | **Ախտահանիչ նյութեր** | Ակտիվ քլոր պարունակող ախտահանիչ հաբեր:<br>Հաբի քաշը մինչև 6գ, որում ազդող նյութը՝ դիքլորիզոցիանաթթվի նատրումական աղը, կազմում է առաջարկվող հաբի ընդհանուր զանգվածի ոչ ավել քան 50%-ը: Որպես հավելող նյութեր պարունակում է նատրիումի հիդրոկարբոնատ և ադիպինաթթու, որոնք ապահովում են աշխատանքային լուծույթի ակտիվությունը առնվազն 5 օր: 1 հաբի լուծման ժամանակ անջատվող ակտիվ քլորի քանակը 1.75 գ-ից ոչ պակաս: Հաբերը ինքնալուծվող են: Միջոցը օժտված է հակամանրէային (ներառյալ տուբերկուլյոզ և հատուկ վտանգավոր վարակներ), հակավիրուսային, հակասնկային ակտիվությամբ: 1 հաբից ստացվող աշխատանքային լուծույթի մինիմալ ծավալը 2,5 լիտր է: Աշխատանքային լուծույթը միատարր է, չի պարունակում նստվածք, քլորին | | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | բնորոշ թույլ հոտով: | | | |

«Խաչպար» ՍՊԸ-ն բողոքով հայտնել է, որ Հրավերի «Տեխնիկական բնութագիր» սյունակում առկա՝ թվով 2, այդ կոնկրետ պահանջները, այն է՝ դիքլորիզոցիանուրաթթվի նատրիումական աղը որպես ազդող նյութ կազմում է հաբի ընդհանուր զանգվածի ոչ ավել քան 50 %-ը, և որ 1 հաբի լուծման ժամանակ անջատվող ակտիվ քլորի քանակը 1,75 գրամից ոչ պակաս լինելը, համապատասխանում են կոնկրետ «Պրեսեպտ» բրենդային անվանումով ախտահանիչ միջոցին: Սակայն «Պրեսեպտ» հաբերի հրահանգում առկա թվերն էլ անգամ ամբողջական չեն ներառվել Ընթացակարգի հրավերի տեխնիկական բնութագրում, քանի որ Պրեսեպտ հաբերի հրահանգի համաձայն՝ 5,0 գրամ կշռով 1 հաբը լուծելիս անջատվում է 1,44 – 1,76 գրամ ակտիվ քլոր, այն դեպքում, երբ Պատվիրատուն իր հրավերում նշել է միայն վերին սահմանը՝ 1,76 գրամ, չնշելով ստորին սահմանը՝ 1,44 գրամ, դրանով թույլ տալով հերթական օրինախախտումը:

Գնման առարկաների բնութագրերը նման ձևով կազմելով Պատվիրատուն չհիմնավորված խոչընդոտներ է առաջացնում հնարավոր մասնակիցների, այդ թվում՝ նաև «Խաչպար» ՍՊԸ-ի համար, որոնք հավասար պայմաններ չեն ապահովում հնարավոր մասնակիցների, այդ թվում՝ նաև «Խաչպար» ՍՊԸ-ի համար:

ՀՀ պաշտպանության նախարարությունը 06.03.2018թ. թիվ ԴՎԱ/793 Խորհրդին հայտնել է, որ «ազդող նյութը՝ դիքլորիզոցիանաթթվի նատրումական աղը, կազմում է առաջարկվող հաբի ընդհանուր զանգվածի ոչ ավել քան 50 %» նշված պայմանը սահմանվել է տեխնիկական բնութագրով, քանի որ եթե ազդող նյութի քանակությունը ավելանում է դա կատարվում է ի հաշիվ հավելող նյութերի՝ նատրիումի հիդրոկարբոնատի և ադիպինաթթվի, որոնք ապահովում են հաբի ամբողջական տարրալուծումը, նստվածքի առաջացման կանխումը և աշխատանքային լուծույթի ակտիվության պահպանումը ոչ պակաս քան 5 օր տևողությամբ, իսկ «1 հաբի լուծման ժամանակ անջատվող ակտիվ քլորի քանակը 1.75գ-ից ոչ պակաս» - աշխատանքային լուծույթում ակտիվ քլորի պարունակությամբ է պայմանավորված լուծույթի ազդեցությունը հարուցիչ շտամերի նկատմամբ: Քանի որ ՀՀ ԶՈՒ ենթակա զորամասերում արդեն երկար տարիներ կիրառվում է բարձր ակտիվությամբ քլոր պարունակող հաբեր՝ որն ապահովում է առավել հուսալի կանխարգելիչ միջոցառումների կազմակերպում տարբեր վարակների դեմ, ակտիվ քլորի քանակության իջեցումը կարող է հանգեցնել այդ հարուցիչների

կողմից ռեզիստենտականության առաջացման, այսինքն միջոցը ոչ միայն չի պայքարում հարուցիչի դեմ, այլ հարուցիչը դառնում է կայուն նմանատիպ ախտահանիչ միջոցների հանդեպ և հետագայում անհրաժեշտություն կառաջանա ձեռք բերել էլ ավելի ակտիվ քլոր պարունակող հաբեր, որն իր հետ կբերի հավելյալ ծախսեր:

Այսպես՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնման առարկայի բնութագրերը՝

1) պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար.

2) չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը.

3) պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը.

Խորհրդի կողմից մի շարք ախտահանիչ միջոցների ՀՀ առողջապահության նախարարության կողմից հաստատված մեթոդական հրահանգների ուսումնասիրությունը ցույց է տվել, որ Ընթացակարգի Հրավերով սահմանված ախտահանիչ միջոցի տեխնիկական բնութագրով սահմանված, այն է՝ դիքլորիզոցիանուրաթթվի նատրիումական աղը որպես ազդող նյութ կազմում է հաբի ընդհանուր զանգվածի ոչ ավել քան 50 %-ը, և որ 1 հաբի լուծման ժամանակ անջատվող ակտիվ քլորի քանակը 1,75 գրամից ոչ պակաս լինելը բնութագրող հատկանիշները սահմանափակում են հնարավոր մասնակիցների մասնակցության իրավունքները, քանի որ պարունակում են կոնկրետ բրենդը նույնականացնող տվյալներ, որոնք առկա տվյալների համաձայն՝ այլ ախտահանիչ միջոցները՝ հաստատված ՀՀ առողջապահության նախարարության կողմից, չեն բավարարում:

Ելնելով վերոգրյալից՝ Խորհուրդը գտնում է, որ Պատվիրատուն Ընթացակարգի հրավերի տեխնիկական բնութագիրը վերը նշված ձևով կազմելով, խախտել է Օրենքի 13-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով սահմանված գնման առարկայի բնութագրերը կազմելու պահանջները, ինչպես նաև Օրենքի 3-րդ հոդվածով սահմանված գնման գործընթացի միասնական կանոններով, մրցակցային, ոչ խտրական հիմունքներով կազմակերպման,

պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնման և նրանց միջև մրցակցության խրախուսման, ինչպես նաև գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարության սկզբունքները:

Ինչ վերաբերում է Ընթացակարգը չկայացած հայտարարելու Բողոքաբերի պահանջին, ապա սույն մասով Խորհուրդն արձանագրում է, որ նշված պահանջը չի հանգեցնում բողոքով բարձրացված հարցի լուծմանը:

Ուստի Խորհուրդը գտնում է, որ բողոքի պահանջը՝ հետևաբար նաև բողոքը, ենթակա է մերժման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

«Խաչպար» ՍՊԸ-ի կողմից ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին 23.02.2018թ. ներկայացված բողոքը մերժել:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

ՀՀ գնումների բողոքարկման
խորհրդի անդամ՝ ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ